զգան, կը կարծեն, թէ իրենց գոյութիւնը այլեւս մեծ իմաստ չունի, որովհետեւ ոչինչ ունին տալիք: Այդ պատճառներով անոնք կը դառնան աւելի ներամիտի եւ կարիքը կ'ունենան յաւելեալ գուրգուրանքի, ընկերակցութեան եւ սիրոյ: Ծերութեան պատճառով անոնք կրնան նաեւ դիմագրաւել զանազան առողջապահական հարցեր եւ ցաւեր, որովհետեւ ժամանակը իր անջնջելի դրոշմը ձգած կ'ըլլայ անոնց մտային եւ ֆիզիքական աշխարհին վրայ: Բժշկական կեդրոնի մը կատարած ուսումնասիրութեան համաձայն, ծերունիները բնականաբար կը կորսնցնեն իրենց յիշողութեան որոշ տոկոսը, չեն կրնան նոյնքան ուշադրութիւն ընել եւ կեդրոնանալ որքան նախապէս, երբեմն կը խօսին առանց մտածելու, կը գործեն արարքներ առանց անդադարաւարու եւ կրնան դժգոհ ըլլալ:



տակ, աղտոտ ու խլիլած տուններու մէջ ապրող ծերունիներ, որոնք նոյնիսկ կարող չեն իրենք զիրենք հոգալու եւ խնամելու: Անոնք շատ յաճախ կը ստիպուին իջնել փողոց մուրալու: Անոնք երբեմն կը կորսնցնեն իրենց տան ուղղութիւնը, կը մնան առանձին փողոցը, կը քնանան մայթերուն վրայ եւ երբեմն երբեք տուն չեն վերադառնար... Այս պայմաններու մէջ ապրող անձեր բնականաբար կը մահանան աւելի կանուխ, զանազան հիւանդութիւններու եւ նոյնիսկ անօթութեան պատճառով: Երանելի չեն նաեւ անոնք, որոնք կը ձգուին ծերանոցներու մէջ եւ կը զրկուին իրենց պարագաներէն հոգատարու-

Ան վերջին անգամ իր զաւակը տեսաւ տարիներ առաջ, երբ տակաւին առողջ վիճակի մէջ էր,

գուրգուրու արտագաղթին



զինք ծերանոց բերաւ եւ դրան մուտքին ըսաւ, որ չմտահոգուի, որովհետեւ ինք ապահով տեղ է, եւ իրենք շատ յաճախ պիտի խօսեցնեն մամիկին... Յաճախակի այցելութիւններու «չարժանացաւ» մամիկը. ան նոյնիսկ «բարխաւուրութիւնը» չունեցած իր գերեզմանին վրայ ծաղիկ մը զետեղող ունենալու... Ծերութիւնը կեանքի բնական ընթացքին մաս կը կազմէ եւ «սկզբունքով» վերջին հանգրուանն է կեանքին...

եւ ծնունդներու համեմատութեան նուազեցման պատճառով այս թիւը աւելնայ, այսինքն 2025 թուականին ծերունիները կազմեն իրաւանեան ընկերութեան 15 առ հարիւրը: Ծերունիներուն հարցով եւ հոգատարութեամբ զբաղելու համար Լիբանանի մէջ կազմուած է յատուկ ազգային կազմակերպութիւն մը, որ կը փորձէ կարելի եղած չափով օժանդակել ծերունիներուն, սակայն այս մէկը շատ մեծ բան չի փոխեր կացութենէն, որովհետեւ մեծ է թիւը առանձին ապրող այն ծերունիներուն, որոնք կը պայքարին անօթութեան, աղքատութեան եւ ծերութեան դէմ: Զանազան պատճառներով վերջին 10 - 15 տարիներուն ընթացքին նաեւ նուազած է մահուան միջին տարիքը, որ նախապէս 71 էր, իսկ վերջին տարիներու տուեաններով, ան եղած է 62:

Այս պայմաններու յոյսին տակ ծերունիները այլ մարդոցմէ աւելի ուշադրութեան, հոգատարութեան եւ սիրոյ կարիքը կը զգան: Լիբանանի մէջ ծերերը բաժնուած են երկու խումբի. առաջինը կը ներկայացնէ այն խաւը, որ առանձին ապրած է եւ տարիներ աշխատանքէ ետք հանգստեան



կոչուած է եւ առանց աշխատանքի կը փորձէ գործուել, իսկ երկրորդ խումբին, որ մեծամասնութիւն կը կազմէ, կը պատկանին այն ծերունիները, որոնք ունին իրենց ընտանիքները: Այս վերջիններուն պարագային եւս կայ երկու տարբերակ. կան զաւակներ, որոնք իրենց մեծ մամիկներն ու պապիկները կը խնամեն եւ իրենց տուններուն մէջ կը պահեն, իսկ այլ անձեր կը նախընտրեն «ձերբազատիլ այդ տաղտուկէն» եւ ծերտան մէջ ապրեցնել իրենց ծնողները: Յաւալի է իրել, թէ այսօր Լիբանանի մէջ չկայ կանաբար հոգաբանական հարցեր կը սկսին դիմագրաւել, առանձին կը

ծերունիները կը պայքարին իրենց գոյութեան պահպանման համար եւ ամէնօրեայ աշխատանքի տարիներէն ետք կը սկսին ապրիլ աւելի դժուար ու դժուարութեամբ լեցուն օրեր: Զկան նաեւ յատուկ օրէնքներ ծերունիներուն համար, ինչպէս այլ երկիրներու մէջ, ուր անոնց համար աւելի յարմար ու մտաչելի պայմաններ կան, ու անոնք կրնան օգտուել անոնցմէ: Փաստօրէն չկան նաեւ անհրաժեշտ թիւով ծերանոցներ եւ վայրեր, ուր տարեցնեք կրնան պատսպարուիլ եւ հանգստանալ, որովհետեւ անոնք եւս նիւթականի կը կարօտին: Ծերութիւնը այսօր սկսած է վերածուել վտանգաւոր հանգստեանի մը, փոխանակ ըլլալու հանգստութեան եւ խաղաղութեան ժամանակաշրջան: Ծերերուն իրենց սիրելիները մօտեցնելու փոխարէն, այսօր նոր սերունդը զանոնք կը նկատէ «փորձանքներ» եւ անոնց ներկայութիւնը տաղտուալի կը նկատուի: Սակայն անշուշտ որոշ մարդիկ նոյն ձեւով չեն մտածեր, այլ՝ ծերունիները կը նկատեն տան օրհնութիւնը եւ անոնց ամէն մէկ արթնքը կը նկատեն իրենց բարխաւուրութիւն եւ յաջողութեան թելը: Այո՛, ծերունիները իսկական օրհնութիւն են, եւ անոնց ներկայութիւնը կը հարստացնէ ընտանեկան մթնոլորտը: Անոնց ձեռքերուն խնամքը վայելելէ, գիշերներ անոնց աչքերուն հսկողութեան տակ խաղաղութեամբ քնանալէ, անոնց հետ խաղալէ, խնդալէ, մեր արցունքները անոնց զգեստներուն սրբելէ եւ անոնց բոլոր բարիքներուն ու հոգատարութեան արժանանալէ ետք, կարելի չէ զլնանալ անոնց նուազագոյն խնամքը:


Երանելի չեն նաեւ անոնք, որոնք կը ձգուին ծերանոցներու մէջ եւ կը զրկուին իրենց պարագաներէն հոգատարու-

թենէն. առանձին սենեակի մէջ նստած՝ կարծէք անոնք կը սպասեն մահուան գալուստին եւ իրենց օրերը կը հաշուեն... Լիբանանեան պետութիւնը այս առնչութեամբ կարգ մը առաջարկներ ներկայացուց, սակայն ծերունիները պահանջներով պարագան չսերտուեցաւ կառավարութեան կողմէ եւ այդ առնչութեամբ ոչ մէկ հիմնական որոշում արուեցաւ, որպէսզի Լիբանանցի տարիներ շարունակ գործելէ եւ երկրին բարգաւաճման գործընթացին օժանդակելէ ետք չմնայ մութ անկիւններու մէջ եւ չմահանայ խոնաւութեան ու անօթութեան պատճառով: Գաւազանի կառչած

ՄՆՆԴԱԳԻՏԱԿԱՍ

Առողջ Մնալու Գաղտնիքները

ԾԻՐԱՆԸ



Մի րանի մշակումը սկսած է Չինաստանի մէջ, աւելի քան չորս հազար տարի առաջ: Ժամանակի ընթացքին զանազան երկիրներ սկսած են մշակել ծիրանի ծառեր: Ծիրանը առաւելաբար կ'աճի արեւադարձային երկիրներու մէջ: Անիկա իր մէջ կը պարունակէ Ա. Պէ. եւ Սէ. կենսաանիւթեր, քալսիում, մակնեգիում, երկաթ, ֆոսֆոր եւ փոթասիւն: Վերոյիշեալ տարրերուն քանակը ալ աւելի կ'աւելնայ չորացած ծիրանին մէջ, քան՝ թարմին: Ծիրանը հարուստ է պեթաքարոթինով: Ան բանջարեղէններուն ու պտուղներուն մէջ առաւելագոյն քանակութեամբ Ա. կենսաանիւթ պարունակող պտուղն է: ■ ԾԻՐԱՆԻ ԿԵՐԸ

Ծիրանը մեծ դեր կը կատարէ ծերութեան յատուկ հիւանդութիւններուն դէմ պայքարելու իմաստով, ինչպէս նաեւ առաջը կ'առնէ քաղցկեղի: Հարուստ ըլլալով կենսաանիւթերու տեսակներով, անիկա անհրաժեշտ է եւ մեծ դեր կը կատարէ ոսկորներու համար համար: Անիկա նաեւ լաւ է մորթին համար: Ծիրանը անհրաժեշտ է ջղային դրութեան համար: Անիկա նաեւ կը նուազեցնէ կնոյ դաշտանային ցաւերը: Ծիրանի կամ նեղութիւններէն դուրս գալու համար, ծիրանը լաւագոյն դեղն է: Ծիրանը կը նկատուի սննդաբար պտուղներէն մէկը: Ան մեծ դեր կը խաղայ արեան շրջագալութեան մէջ: Անիկա անհրաժեշտ է շնչառութեան, աչքերուն եւ սեռային գործարաններուն համար: Ծիրանը օգտակար է մանաւանդ արեան տկարութիւն եւ կոկորդի բորբոքում ունեցողներուն համար: ■ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԶԵՐԸ

Ծիրանը չի կորսնցնիր իր մէջ գտնուող անհրաժեշտ տարրերը, երբ եփենք կամ չորցնենք զայն, բացի Սէ. կենսաանիւթէն: Թարմ կամ չորացած ծիրան կեր նուշով միասին, նուազեցնելու համար դաշտանին նախորդող ցաւերը: Թարմ կամ չոր ծիրանը օգտագործէ, երբ կը պատրաստես անուշեղէններ, ինչպէս՝ թարթ, կարկանդակ, փայ, սուֆլէ եւ պաղպաղակ: Պատրաստէ աննդարար աղցան մը՝ հազարով վայրի կաթխտով, սոխով, պաննով, խնձորով, ծիրանով, ընկույզով, շերտուած պանիրով, քիչ մը լեմոնով եւ ձիթաբլիթով: Թարմ կամ չոր ծիրանը շերտէ եւ անոր վրայ աւելցուր այլ պտուղի տեսակներ եւ ներկայացուր իրեն սննդաբար պտուղներու «խառնուրդ» մը: Ետագուր թարմ կամ չոր ծիրանը եւ անկէ պատրաստէ համեղ անուշ: Զարմանալի չէ, որ մեր նախահայրերը յաճախ խօսած ու գովքը հիւսած են այս պտուղին, մինչեւ իսկ թագաւորական գոյնի վերածած են զայն, ծանօթ ծիրանի հոմանիշով: Անոնք անպայման դիտակցած են անոր սննդական առաւելութիւններուն, մասնաւորաբար, որ մեր երկրի հարուստ եղած է եւ մինչեւ օրս է այս յատուկ պտուղով, ծիրանով, որ շատերու համար մինչեւ իսկ հայրութեան հոմանիշ դարձած է, անշուշտ նաեւ կողբին:

ԲԱՐԱԸ ԵԱՐՏԵԱՆ

AFHIL
ARMENIAN FUND FOR HEALTH INSURANCE IN LEBANON

TOGETHER WE GROW STRONGER

**HEALTH CARE
LABORATORY SERVICES
AMBULANCE SERVICES
NURSE AT HOME
HOME MEDICAL EQUIPMENTS**

Պատրաստե՛ք ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

BOURJ HAMMOUD, AFED BLDG., TEL: 01 242 556 - 01 242 557



ԿՆՈՋԱԿԱՆ

ՓՈՐՁ - ՇԱՐՅԱՐԱՆ

ՈՐՔԱՆ ԱՁԴԵՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՔ ՉԵՐ ՍԻՐԱԾ ԱՆՉԻՆ ՎՐԱՅ...

1

- Անոր հետ կը կապուիք
- Ա.- Որպէսզի իր ինքնաշարժը փոխ առնէք (2)
- Բ.- Որպէսզի ձեզ ընթրիքի մը հրահրէ (4)
- Գ.- Իմանալու համար, թէ ի՞նչ կ'ընէ (1)
- Դ.- Որովհետեւ ձայնը կարօտցած էք (3)

2

- Երբ նիւթի մը շուրջ կը զրուցէք
- Ա.- Այնպէս մը կ'ընէք, որ ամբողջական վստահութիւն ունենայ ձեր վրայ (2)
- Բ.- Կը զայրացնէք զինք (2)
- Գ.- Քննադատելու սիրոյն կը քննադատէք զինք (5)
- Դ.- Ձեր գաղտնիքները կը յայտնէք անոր (1)

3

- Ձեր սիրած անձին ուշադրութիւնը կը գրաւէք
- Ա.- Իրեն հաճոյք պատճառով խօսքերով (1)
- Բ.- Անսովոր հագուածքով (4)
- Գ.- Կախարդական նայուածքով (2)
- Դ.- Ձուարթ խնդրով (3)

4

- Գլուխ-գլխի հանդիպումներուն ընթացքին
- Ա.- Պատրաստ էք մոռնալու ձեր տարակարծութիւնները (1)
- Բ.- Մեծ անկեղծութեամբ ձեր սիրտը կը բանաք (4)
- Գ.- Զիջումներ կ'ընէք իրեն հաճելի թուելու համար (2)
- Դ.- Ամէն գնով զինք կը գոհացնէք (3)

5

- Իր արտաքին գրգռելու համար
- Ա.- Իր սիրած մէկ կերակուրը կը պատրաստէք (2)
- Բ.- Մօտակայ ճաշարանէն ճաշ կ'ապսպրէք (1)
- Գ.- Միասնաբար խոհանոց կը մտնէք համեղ ընթրիք մը պատրաստելու համար (3)
- Դ.- Խոհագիրներու գիրքը ձեռքը կու տաք, որպէսզի ճաշատեսակ մը ընտրէ եւ դուք պատրաստէք (4)

6

- Երբ գործէն վերադառնալ
- Ա.- Շամփանիայի շիշը կը բանաք եւ լայն ժպիտով կը դիմաւորէք (3)
- Բ.- Ձեր ամէնէն գեղեցիկ հագուածքները կը հագնիք (4)
- Գ.- Տունը ամբողջութեամբ կոկած կ'ըլլաք (1)
- Դ.- Տունը ծաղիկով եւ վառած մոմերով կը յարդարէք (2)

7

- Իր երեւակալութիւնը զարգացնելու համար
- Ա.- Գեղեցիկ բանաստեղծութիւն մը կը գրէք իր մասին (2)
- Բ.- Սիրային երգեր ունկնդրել կու տաք (3)
- Գ.- Մագեր կը շոյէք (5)
- Դ.- Միասին հաճելի ժապաւէն մը կը դիտէք (1)

8

- Ընտրեցէք 3 յատկութիւններ, զորս կը սիրէք ձեր մէջ
- Ա.- Ձեր բոյրը (2)
- Բ.- Ձեր պերճախօսութիւնը (3)
- Գ.- Ձեր իրապաշտութիւնը (3)
- Դ.- Ձեր քամահաճութիւնը (2)
- Ե.- Ձեր հասակը (2)
- Զ.- Արտաքին տեսքը (5)
- Է.- Ձեր ձայնը (2)
- Ը.- Ձեր ինքնավստահութիւնը (3)
- Թ.- Ժպիտը (4)

ԽՈՇԱԳԻՐ

ԽՆՉՈՐՈՎ ԹԱՐԹ

- Բաղադրութիւն՝ 4 անձի համար.
- Փաթ ֆետրիթ պատրաստ խմոր
- Հաւկիթի դեղնուց մը
- Երկու խնձոր
- Չորս կտոր (ընկոյզի չափ) կարապ
- Չորս ապուրի դգալ շաքար
- Չորս պտղունց փոշի կասիա



Պատրաստութիւն.- Խմորը տարածել եւ չորս քառակուսիներու վերածել: Իւրաքանչիւր կտորուած քառակուսին տեղաւորել թարթի անհատական, պզտիկ կաղապարի մը մէջ:

Չորս խմորներուն երեսը ծեփել հաւկիթի դեղնուցով:

Կեղուրուած եւ մաքրուած խնձորները չիփսի պէս բարակ շերտել եւ խմորներուն կեղուրը տեղաւորել: Իւրաքանչիւրին վրայ լեցուն ապուրի դգալ մը շաքար եւ քիչ մը փոշի կասիա ցանել:

Նախապէս տաքցուած փուռին մէջ եփել 15 վայրկեան, ապա հրամցնել գաղջ կամ պաղ, թարմ սերի կամ պաղպաղակի կողքին:

Ժ.- Ձեր ճարտար խոհարար ըլլալը (1)

9

- Շարժավերջին համար կ'առաջարկէք
- Ա.- Բարեկամներու հետ անցընել (1)
- Բ.- Գնումի երթալ (2)
- Գ.- Գիշերը «ռոմանթիք» ճաշարանի մը մէջ ճաշել (3)
- Դ.- Պարելու երթալ (4)

10

- Ինչպիսի՞ գիրք մը կը նուիրէք անոր
- Ա.- Պատմական (1)
- Բ.- Ռոմանթիք (3)
- Գ.- Բանաստեղծութիւններու (4)
- Դ.- Միծաղի վերաբերեալ (2)

11

- Ձեր սիրած անձին մէջ առաւելաբար կը գնահատէք
- Ա.- Անկեղծութիւնը (1)
- Բ.- Սրամտութիւնը (4)
- Գ.- Հասկացողութիւնը (2)
- Դ.- Ներողամտութիւնը (3)

12

- Ձեր նախասիրած նուագարանն է
- Ա.- Ջուլիան (3)
- Բ.- Դաշնակը (1)
- Գ.- Սրինգը (2)
- Դ.- Թմբուկը (4)

13

- Անոր գործի ժամերուն
- Ա.- Յաճախ կը հեռաձայնէք եւ ծրագրի մը մասին կը խօսիք (4)
- Բ.- Երբեք չէք կապուիր՝ զինք չխանդարելու համար (3)
- Գ.- Կը կապուիք՝ շատ լուրջ հարցի մը գծով անոր կարծիքը առնելու համար (2)
- Դ.- Հեռաձայնով կը կապուիք «վերջին ճոքը» պատմելու համար (1)

14

- Ձեր ննջասենեակին պատերէն կը կախէք
- Ա.- Բնութեան տեսարաններ (2)
- Բ.- Միբարձարած գոյգերու որմագղներ (4)
- Գ.- Ձեր վերջին արձակուրդէն լուսանկարներ (1)
- Դ.- Ձանագան չափի եւ ձեւի հայելիներ (2)

15

- Նոր քարտուղարուհի մը կ'աշխատի անոր գրասենեակը, հարցումներ կ'ուղղէք անոր
- Ա.- Գեղեցկութեան մասին (3)
- Բ.- Ուսման մակարդակին մասին (1)
- Գ.- Լրջութեան մասին (3)
- Դ.- Մագերուն գոյնին մասին (5)

16

- Երբ ձեզի առաջարկ մը ընէ
- Ա.- Ուշադիր կը զսէք (2)
- Բ.- Կը ձեռնարկէք, որ համաձայն էք (3)
- Գ.- Անակնկալի կու գաք (1)
- Դ.- Մանրամասն բացատրութիւն կը պահանջէք (4)

17

- Անոր հաճելի թուելու համար հետը կը պարէք
- Ա.- Վայս (3)
- Բ.- Սլօ (4)
- Գ.- Սամպա (1)
- Դ.- Թանկօ (2)

18

- Կը զայրանաք, երբ
- Ա.- Ձեզի հետ կը վարուի հոգեբուժի պէս (2)
- Բ.- Խօսակցութեան մէջ կը ինչէ իր նախկին ընկերուհին (1)
- Գ.- Ինքնաշարժին դուռը չի բանար, որպէսզի նստիք (4)
- Դ.- Իր մասին ժամերով կը խօսի (5)

19

- Երջանկութիւն կը նշանակէ
- Ա.- Ներութեան ետք՝ հարցերու լուծում (4)
- Բ.- Հոգեկան հանգստութիւն (2)
- Գ.- Ներքին հաւասարակշռութիւն եւ ներդաշնակութիւն (3)
- Դ.- Անցողակի ամպ (1)

20

- Անոր կողմէ գործուած սխալի մը նկատմամբ
- Ա.- Ներողամիտ էք (3)
- Բ.- Աններող էք (1)
- Գ.- Պատրաստ էք մեղմացուցիչ պատճառներ գտնելու (3)
- Դ.- Կը մտածէք սխալին մէջ մասը ձեր վրայ առնել (3)

Պատասխանները՝ էջ 8

ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ԿԸ ՅՂԱՆԱՄ՝ ՅԱՐԳԵԼՈՎ ԿՆՈՋ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կ'ԸՍԵ ԼԻԲԱՆԱՆՑԻ ՉԵՒԱԳԵՏ ՂԱՍԱՆ ԱՆԹՈՆԻՈՍ

Սարտի սկիզբը «Ֆենիսիա Էնթրթեյնմենթս» պանդոկին մէջ տեղի ունեցած «Պէրուս Ուետինկ Ֆէյր»-ի ծիրէն ներս լիբանանցի երիտասարդ ձեռագետ Ղասան Անթոնիոս առաջին անգամ ըլլալով հանրութեան ներկայացուցիչ իր նորաձեւութեան անդրաճիկ հաւաքածոն, որ կը բաղկանայ հոթ քուրսի աւելի քան քառասուն ստեղծագործութիւններ:

Ստորեւ կը ներկայացնենք այս առիթով խոստմնալից ձեւագետին հետ մեր ունեցած հարցազրոյցը:

«Ա.Ձ.Ա.Կ.»- Ի՞նչպէս կը բնորոշէք ձեր առաջին հաւաքածոն:

ՂԱՍԱՆ ԱՆԹՈՆԻՈՍ.- Այս հաւաքածոն առաջին հերթին կը յատկանշուի այլազանութեամբ: Մենք մեզ չենք սահմանափակած որեւէ թեմայով եւ ատոր շնորհիւ հաւաքածոն իր հիմնական գիծերուն մէջ դասական մնալով հանդերձ, կը ներկայանայ ինքնատիպ գործերով: Նկատի ունենալով, որ մեր առաջին ցուցադրութիւնն է այս մէկը, փորձեցինք համարել մեր գաղափարները:

«Ա.»- Ի՞նչ կտորներու գոյներ օգտագործած էք:

Ղ. Ա.- Օգտագործած ենք բոլոր կտորները՝ ճինգէն մինչեւ ազնուագոյն մետաքսն ու շղարչը: Մեծ քանակով օգտագործած ենք նաեւ ասեղնագործումը, սակայն զայն միաձուլած ենք կերպասին հետ, այնպէս որ, կարելի չէ գանձը գատորոշել իրարմէ:

Ինչ կը վերաբերի գոյներուն, օգտագործած ենք բոլոր գոյները՝ դասական սեւէն, ճերմակէն, մինչեւ վառ գոյներն ու հոգիի երանդները: Ձեռք խուսափած ենք ներդաշնակ ձեւով օգտագործել իրարու հակադրուող վառ գոյները:

«Ա.»- Ձեզի համար ի՞նչ է դասակարգութիւնը:



Ղ. Ա.- Ինձի համար դասական հասկացողութիւնը իր տեղը կը գիշի յաւիտենականին: Նոյնիսկ նորաձեւութեան մէջ ստեղծագործութիւն մը պէտք է գեղեցիկ ու վայելուչ ըլլայ, ինչ ալ ըլլայ օրուան նորաձեւութիւնը:

«Ա.»- Ինչո՞վ կը յատկանշուի իբրանցի կնոջ հագուածքը:

Ղ. Ա.- Արեւելիք եւ թերեւս աշխարհի ամէնէն գեղեցիկ հագնող կիներէն է իբրանցի կինը եւ իր վայելուցիչութեամբ կը մրցի յառաջադէմ ազգերու կիներու հետ:

Իբրանցեան ընկերութեան մէջ կայ կենսուրախ մթնոլորտ, որ առիթ կը ստեղծէ հագուածքի: Լիբանանցի կը սիրէ կեանքը, եւ անոր ուրախ ու շէն տրամադրութիւնը լաւագոյն ձեւով կ'արտայայտուի գեղեցիկ հագուածքով:

«Ա.»- Իսկ ի՞նչ է ձեզի համար նորաձեւութեան ինչ-որ բան:




րաձեւութեան ու վայելուքեան յարաբերութիւնը:

Ղ. Ա.- Նորաձեւութեան ստեղծագործութիւնները վայելուցիչութեամբ չեն պայմանաւորուիր, սակայն ինձի համար շատ կարեւոր է վայելուցիչութիւնը: Ձեռք կրնար պատկերացնել նորաձեւութեան ստեղծագործութիւն մը, որ վայելուչ չէ: Հագուածք կնոջ համար է եւ ոչ թէ հակառակը: Այդ պատճառով ալ հագուածք պէտք է վայելուցիչ տայ կնոջ ու ներդաշնակուի անոր անհատականութեան հետ: Կինը պէտք է երբեք իր ամբողջ իգականութեամբ ու միաժամանակ պարզութեամբ:

«Ա.»- Կնոջ ի՞նչ պատկերացումով կը յղանք ձեր ստեղծագործութիւնները:

Ղ. Ա.- Առաջին հերթին կինը կը տեսնեմ իր իգականութեան մէջ: Հագուածքները կը յղանամ՝ յարգելով կնոջ անհատականութիւնը:



տականութիւնն ու անոր մարմին կանցի համեմատութիւնները առանց փոխելու գանձը, որովհետեւ շատ գեղեցիկ կը գտնեմ կնոջ մարմինը: Հագուածքի կտորուածքները պէտք է հետեւին կնոջ մարմնին ձեւին եւ ծաւալին բնականօրէն ու կանացիօրէն:

Պատրաստեց ՇՈՒՇԻԿ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ

ՈՐՔԱՆ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆ...

707 ԷՋԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

● Եթե յիսուե՞ն անլի կետ հաւաքեցիք, ձեր ան-
ցախտեանի հակազդեցութիւններով գլխու պտոյտ
կու տաք ձեր սիրած անձին, այնքան մը, որ ան զատ-
րաստ է կատարելու ձեր բոլոր փափաքները՝ մէկ
կողմ ձեզ վրայ պատշաճութիւնները եւ առօրեայ
«ուրբի»-ը:

Ամէն վայրկեան կը ճրահրէք ու կը հրապուրէք
զինք եւ տեւաբար կը համեմէք անոր կեանքին իւ-
րաբանչիւր վայրկեանը, այնքան մը, որ ան ձեզմէ
զատ ոչ ոք կը տեսնէ իր շուրջը:

● Եթե 49-31 կետ հաւաքեցիք, փորձառու անձ էք
եւ ծուղակը չէք իյնար: Անոր զգացումներուն տի-
րապետած էք, բայց եւ այնպէս չէք շահագործեր
ձեր սիրած անձը, եւ ձեր կարգին կը ջանք գոհ ձեզ
զինք: Դիւրին միջոցներու չէք դիմեր զինք հմայե-
լու համար, բան մը որ գնահատուած է անոր կողմէ
եւ բնականաբար ձեզ փոխարինելու մասին երբեք
չի մտածեր:

● Եթե 30 եւ պակաս կետ հաւաքեցիք, խառնուած-
քով զուսպ անձ մըն էք, ձեր զգացումները չէք բա-
ցայտեր, ոչ ալ կ'ուզէք արուեստական միջոցնե-
րով հմայել ձեր սիրած անձը: Կ'ուզէք, որ ան ձեզ
ընդունի այնպէս, ինչպէս որ էք: Բացարձակապէս
ձեր իրաւունքին մէջ էք, բայց մի՛ մոռնաք, որ եր-
բեմն ազնիւ խօսք մը, ժպիտ մը, նաշակաւոր շարք
մը կամ հագուածք մը հանոյք կը պատճառեն դի-
մացիներ:

ՍԱԿԱՐԱՆ

Պէտքով սակարանի մէջ տար դրամահաններու փակման սակագները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	32,35 - 32,45 լ.ն.
Իրաքեան տինար	4855,00 - 4865,00 լ.ն.
Քուէթեան տինար	4975,00 - 5000,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2114,00 - 2124,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	3975,00 - 4000,00 լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տիրիւմ	410,50 - 412,50 լ.ն.
Քաթարեան ռիալ	413,00 - 415,00 լ.ն.
Սեուտական ռիալ	401,75 - 403,75 լ.ն.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կիւնէ	249,00 - 259,00 լ.ն.
Անգլիական սթըրլին	2372,00 - 2382,00 լ.ն.
Զուիցերիական ֆրանք	1101,00 - 1106,00 լ.ն.
Թրքական լիրա	88,25 - 88,75 լ.ն.
Կիպրական փաուստ	2775,00 - 2800,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,60 - 12,70 լ.ն.
Ամերիկեան հապար ֆրանք	2,85 - 2,90 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1018,00 - 1023,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	903,00 - 908,00 լ.ն.
Եւրօ	1633,00 - 1643,00 լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	129,000 - 134,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	115,000 - 120,000 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	106,000 - 111,000 լ.ն.
Մեքսիքական փետոս	613,000 - 633,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձուլ ոսկի	15,945,000 - 16,145,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	330,50 - 331,00 \$
Մէկ օնս արծաթ	4,39 - 4,41 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.0830 - 1.0835
Քանադական տոլար	1.4778 - 1.4788
Զուիցերիական ֆրանք	1.3679 - 1.3689
Ճափոնական եէն	118.77 - 118.81
Մէկ սթըրլին	1.5732 - 1.5742
Մէկ քուրար	557 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիցի Ա. ճշդում Գիցի Բ. ճշդում	
Ա. կարգ	4 3/8 4 3/8
Բ. կարգ	4 4/8 4 4/8

ԼՈՒՄԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ

ՐԱՄԱԶԳԱՅԻՆԻ Մ. ԵՒ ՐԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԲԵՐՄԵՍ

16, 17, 18
ՄԱՅԻՍ 2003

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ

ՐԱՄԱԶԳԱՅԻՆԻ Մ. ԵՒ ՐԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ

2 ՄԱՅԻՍ 2003

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶՄԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ մահուան քառասունըքն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 6 Ապրիլ 2003, Էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՆ ԹԻԻ 5406 Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- ՇՈՐՀՈՆԱԿԱՆ**
1. Թոշակ - Անդրոս:
 2. Ասիական երկիր - Միջատ:
 3. Երկնոտ - Մարտունիի գիւղերէն:
 4. Սերո նանգաղեանի երկերէն:
 5. Նմանաձայն տառեր - Հովիտ - Կրկնուած ձայնաւորներ:
 6. Անճարակ - Յարմար:
 7. Տեղական մակբայ - Անաստան:
 8. Պայթարողներու միութիւն - Հակառակորդ:
 9. Ածականակերտ մասնիկ - Յրանայի գետերէն:
 10. Մանկու - Օդ:
 11. Ա. Մ. Նահանգներէն - Տափակ դրամ:
- ՈՂՂԱԿԱՅԵԱՆ**
1. Թովչուլթիւն - Արտայայտուածի կերպ - Առատ:
 2. Ճամբայ - Յուպ:
 3. Սրունքի մեծ ոսկոր - Լորջք:
 4. Թանձրամարմին կենդանի - Հոնկէ:
 5. Գումարտակ:
 6. Ուժ դարձող կեդրոն - Կլոր բուրգ:
 7. Փոքր - Զօրաբարէլի որդին:
 8. Փշալից ընդարբըրոյս - Փարէսի եղբայրը:
 9. Բուսնին - Ճնդազգի թռչուն:
 10. Իրերայաջորդ գրեր - Ինք - Հարսին հայրը - փեսային նկատմամբ:
 11. Հոմերոսի երկերէն - Տառի մը անունը:

ԹԻԻ 5405

ԽԱՉԲԱՆԻ

ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ս	Տ	Ո	Յ	Ա	Յ	Ն	Մ	Ա	Ն
2	Կ	Ո	Ղ	Ա	Յ	Ն	Մ	Ա	Ն	Ն
3	Ք	Ր	Գ	Ս	Ա	Մ	Ո	Ղ	Ճ	
4	Ք	Ո	Կ	Ա	Մ	Պ	Ի	Մ	Ա	
5	Ե	Ն	Ք	Ա	Ր	Կ	Ե	Լ	Ո	Յ
6	Լ	Ո	Ր	Ե	Ր	Ա	Ն	Գ		
7	Է	Տ	Ա	Կ	Ն	Ք	Ր	Լ	Ի	Մ
8	Մ	Ի	Գ	Ա	Ս	Ա	Հ	Ա	Ր	
9	Լ	Ի	Ի	Ա	Ն	Գ	Մ	Ր	Ա	
10	Է	Լ	Ր	Թ	Մ	Ի	Ր	Ա	Ն	
11	Ջ	Ի	Ա	Ա	Ն	Ս	Ա	Ն	Գ	Գ

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՏՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՈՍԱԸՐՁՈՒԹԻՒՆ

ԳԱՐՈՒՆԸ ԵՐԳՈՎ ԴԻՄԱՒՈՐՈՂ ՓԱՌԱՏՕՆ ՄԸ՝ «ՍՓՐԻՆԿ ՄԻԹԻՆԿՉ»



Գարնան ուրախ գալուստը, նաեւ երաժշտութեամբ դիմաւորելի փափաքողներուն համար արուեստագէտներու խմբակ մը կը նախաձեռնէ գարնանային շրջաօրէնայ փառատօնի մը: «Սփրինկ միթինկ» խորագիրը կրող եւ Լիբանանի մէջ առաջին անգամ ըլլալով կազմակերպուող այս փառատօնը ձուլած է պատուօրէն եւ տեղւոյն վրայ տեղի ունեցող (եմփրոփիկ) երաժշտութեան:

(ալթօ սաքսֆոն) եւ Շարիֆ Սրինաուի (կիթառ):

- Ուրբաթ, 4 Ապրիլի երեկոյան ժամը 8:00ին, «Զիքօ հաուս» ցուցարահին մէջ «Փերօ-Ռիվ-Սըր հիւսուի» ելոյթով հանդէս պիտի գան Սրեֆան Ռիվ (սոփրանօ սաքսֆոն), Էտուար Փերօ, Քրիսթին Սրինաուի եւ Շարիֆ Սրինաուի, որոնք պիտի ներկայացնեն սաքսֆոն-թմբուկ-կիթառ եռյակի համադրութիւնը:

- Շաբաթ, 5 Ապրիլի երեկոյան ժամը 8:00ին, «Զիքօ հաուս» ցուցարահին մէջ ելոյթ պիտի ունենան Սրեֆան Ռիվ եւ Քրիսթին Սրինաուի:

- Կիրակի, 6 Ապրիլի երեկոյան ժամը 8:00ին, «Զիքօ հաուս» ցուցարահին մէջ ելոյթ պիտի ունենայ Էտուար Փերօ:

«Սփրինկ միթինկ»-ի որմազը

Երկու ֆրանսացի եւ երեք իրանացի արուեստագէտներու կազմակերպած այս փառատօնը տեղի պիտի ունենայ 3-5 Ապրիլին: Հետաքրքրական է այն, որ երաժշտական այս փառատօնը կը տարբերի երաժշտական ընկալումը ձեռնարկներէ եւ կը նմանէր երաժշտական նորարարի նշանակալից գոյացումը: Ստորեւ կը ներկայացրուին «Սփրինկ միթինկ»-ի յայտագիրը.

Յարիֆ Սրինաուի, Քրիսթին Սրինաուի, Սրեֆան Ռիվ եւ Էտուար Փերօյի ղեկավարութեամբ, «Սփրինկ միթինկ»-ի ծիրէն ներս պիտի կազմակերպուին երաժշտական ուսուցում ժամանակաւոր երկու արուեստանոցներ, որոնք կը նպատակադրեն պատուսուցման մեթոտներով երաժշտներու երաժշտականութեան արուեստը քաջալերելու արուեստը ստեղծող երաժշտական ստեղծագործութեան:

Ստորեւ կը ներկայացրուին «Սփրինկ միթինկ»-ի յայտագիրը.

ՆՈՒԱԳԱՀԱՆԳԵՄԵՐ

- Հինգշաբթի, 3 Ապրիլի երեկոյան ժամը 8:00ին, «Էսփաս Էս. Տէ.» ցուցարահին մէջ տեղի պիտի ունենայ «Ռուպի-Էմփրոփիկ Լիպրօ Լիպան» ընկերակազմի ելոյթը, որ նախապէս նախաձեռնած է երաժշտական իրաւաստուի այլ ձեռնարկներ:

- Հինգշաբթի, 3 Ապրիլի երեկոյան ժամը 8:00ին, «Էսփաս Էս. Տէ.» ցուցարահին մէջ տեղի պիտի ունենայ «Ռուպի-Էմփրոփիկ Լիպրօ Լիպան» ընկերակազմի ելոյթը, որ նախապէս նախաձեռնած է երաժշտական իրաւաստուի այլ ձեռնարկներ:

րու: Փառատօնին առիտ-սոփրանօ սաքսֆոն), Քրիսթին Սրինաուի

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)

Դրամ շահելու լաւ առիթներ պիտի ունենաք այսօր: Եթէ պայմանագիր մը կամ փոխառութեան ձեւի համաձայնագիր մը կ'ընէք, չէք գոչար այսօր:

☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)

Եթէ այսօր կասկած մը ունենաք դուք ձեր նկատմամբ, ձեր հարազատները պիտի մղեն ձեզ, պիտի քաջալերեն, որպէսզի կատարէք տուեալ ծրագիրը ու պիտի յաջողի:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)

Եթէ քննութիւն մը պիտի անցնէք կամ այլ կարգի փորձի մը պատրաստուած էք, պիտի յաջողիք: Այսօր ձեր բոլոր աշխատանքները պիտի գնահատուին:

☆ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Մի՛ վարանիք մաս կազմելու ընկերային գործուցումներէ մը. շատ գոհ պիտի մնաք այս շրջանակին մէջ: Եղբ կորովի եւ հանոյաւոր, նաեւ՝ ծանալաւոր:

☆ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Նախաձեռնող եղբ, թոյլ մի՛ տաք, որ ձեր ձեռքին բռնած որսը փախչի: Հարկ է, որ ունենաք քիչ մը յանդուրձան եւ ինքնավստահութիւն: Օրը պիտի օգնէ ձեզի եւ պիտի յաջողիք:

☆ **ԿՈՅՄ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Եթէ հարց մը ունիք անձի մը հետ, կամ անհասկացողութիւն կը տիրէ ձեր միջեւ, ի վերջոյ պիտի կարենաք հարցը լուծել բարեկամական ոգիով, ու ձեր սիրտը պիտի թեթեւայ այս ձեւով:

☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Հակառակ կարգ մը նկատի չառնուած ծախսերու, այսօր պիտի կարենաք ներքալան ձեր վիճակը պահել հաւասարակշռուած ձեւով: Նոյն առեմ մի՛ մոռնաք ըլլալ խնայատէր, մահաւանդ այս օրերուն:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Ձեր բարեկամը կամ ամուսինը կ'ուզէ, որ զինք առնէք այնպէս, ինչպէս որ է եւ դադիրը պահանջելէ, թէ ան ըլլալ կատարելալ էակ մը: Որովհետեւ ան հարց կու տայ. արդեօք նաեւ նոյնքան պահանջկոտ էր ձեր ձեռքին նկատմամբ...

☆ **ԱՂԵՂՆԱԿՈՒՄ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Եթէ ձեր աշխատավայրին մէջ գործերը դիզուած են եւ աշխատանքը ծանրացած, պիտի աշխատիք սիրով, որովհետեւ ձեր շուրջը գտնուող կարգ մը ծուրերն անձեր արձակուրդի գացած են:

☆ **ԱՅՄԵՂԶԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Ամիսը պիտի անցնի ուրախութեամբ եւ սիրով մթնոլորտին մէջ: Այսօր արդէն պիտի հրապուրուիք անձի մը հմայքով, որ ձեզի համար պիտի ըլլայ սիրոյ աղբիւր մը, որուն հետ ձեր կապը կրնայ ըլլալ խոր ու երկարատեւ:

☆ **ՄՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Այն հետապնդումները եւ աշխատանքները, զորս կատարած էք անցեալին ձեր ընտանիքին բարօրութեան համար, արդիւնք պիտի չտան այսօր: Բայց գործը շարունակեցէք հետապնդել:

☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Ամսուան ընթացքին նուերները պիտի ստանաք: Եթէ արձակուրդի առիթ ունիք քանի մը օրուան համար, գացէք հանգստանալու, որպէսզի փոխուիք քիչ մը եւ աշխուժանաք:

ԱՅՍՕՐ

- Փառատօն «Սփրինկ միթինկ», ելոյթ կ'ունենան Ե. Փերօ (սոփրանօ), Մ. Քրիսթին (թմբուկ) եւ Ս. Սրինաուի (կիթառ), ժամը 20:00ին, «Էսփաս Էս. Տէ.» ցուցարահին մէջ:

- Երգահանդէս, ելոյթ կ'ունենան Կարինա Խալիփ (սոփրանօ) եւ Օլիա Պոլուն (դաշնակ), ժամը 20:00ին, Սէն Ժոզեֆ համալսարանի «Փիեռ Ապու Խաբեր» սրահին մէջ:

- Երգախոսն ու պարային ելոյթ՝ Մանուր Ռահպանիի «Մլուր արաւակ», ժամը 20:30ին, «Քազիմ տիւ Լիպան»-ի մէջ:

- Ցուցահանդէս՝ «Լա պիտիվերսիթե. Գործարար փոքր տրամբ», Տուֆի Ֆրանսական Մշակութային կեդրոնին մէջ, մինչեւ 19 Ապրիլ:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Մա Գաբիլ մորթ», Ռաշա Քուրպարի Խոնա, «Ռոշէն» ցուցարահին մէջ, մինչեւ 3 Ապրիլ:

- Նկարչական ցուցահանդէս՝ Աննա Չալապի գործերը, «Ամիալ» ցուցարահին մէջ, մինչեւ 5 Ապրիլ:

ՕՂԵՐԵՆՈՅԹ

ՀԻՆԳԵԱՐԹԻ, 2 ԱՊՐԻԼ 2003

ՊԵՅՐՈՒԹ ԱՆՁՐԵՒՈՏ

ՁԵՐՄԱՍՏԻՃԱՆ 3ԵՐԵԿ՝ 19°C

ԳԻՇԵՐ՝ 14°C

ՌՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 71%

ԱԶԳԱԿ 50 ՏՄԻՒ ԽՈՒՆՁ 3 ԱՊՐԻԼ 1953

ԼԻԲԱՆԱ

ԹՈՔԱՏԱԳՐԻ ՀԻՒՆՆԵՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՐԴ ԽԼԱԾ Է 78 ՁՈՂ

ՇԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԷ ԸՈՆԿ ՔՈՆԿ ԵՒ ԸԱՐԱԲԱՅԻՆ ՉԻՆԱՍՏԱՆ ՄԵԿՆԵԼԷ

Համաշխարհային Առողջապահության կազմակերպությունը երեկ աննախընթաց պահանջարկով անդամներին հրապարակեց է՝ ըսելով, թե պէտք է պահանջարկը հնարավոր է հարաւային Չինաստանի կուսակցության նախագահ մեկնելի՛ք շնչառական մահացու ժահրի մը տարածումին պատճառով:

Իր 55 տարուան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով է, որ ՄԱԿի առողջապահութեան գործակալութիւնը կը թելադրէ յատուկ շրջան մը չմեկնելի՛ վարակիչ հիւանդութեան մը տարածումին պատճառով, յայտնած է ժրնեւի մէջ կազմակերպութեան բանբերը՝ Իլըն Սիմփսըն:

Վարակիչ հիւանդութիւններու բաժանմունքին պատասխանատու Տէյվիտ Հեյմըն բացատրած է, որ կազմակերպութիւնը այդ թելադրանքը կատարած է «որովհետեւ ամբողջովին չենք հասկնար, թէ հիւանդութիւնը Հոնկ Բոնկի մէջ ինչպէ՛ս կը փոխանցուի», եւ «ն՛չ պատուաստ կայ, ո՛չ դեղ»:

Կուսակցական նախագահն է Հոնկ Բոնկի մէջ ամենէն մեծ համեմատութեամբ ՄԱՐՍի պարագաներ արձանագրուած են:

Չինաստան երեկ յայտարարած է, թէ 9 նոր մահեր արձանագրուած են թոքատապին պատճառով: Անկէ ա Վերջոյ Ա. Հ. կազմակերպութեան արտօնութիւն տուած է այնչէրով կուսակցական նախագահ, ուր կ'ենթադրուի, թէ հիւանդութիւնը ծայր տուած է:

Միւս կողմէ, իրանդութիւնը ցարդ 78 կոհ խլած է. 46՝ Չինաստանի, 16՝ Հոնկ Բոնկի, 6՝ Քանտայի, 4՝ Սինկափուրի, 4՝ Վիեթնամի եւ 2՝ Թայլանտի մէջ: Պարագաներու մասին տեղեկութիւններ հաղորդուած են աւելի քան 20 երկիրներու մէջ:

Ինչ կը վերաբերի Միացեալ Նահանգներու, նախանցեալ օր Քալիֆորնիոյ մէջ Օայրազոյն Արեւելքէն ծամանած օդանաւի մը մէջ չորս պարագաներ յայտնուած էին, եւ ամերիկեան իշխանութիւնները ամբողջ օդանաւին ճամբորդները յատուկ վայր (քարանձախ) փոխադրած էին: Յարդ այս գծով ոչ մէկ նորութիւն կը հաղորդուի:

Ամերիկեան կարգ մը օրաթերթեր, ինչպէս նաեւ աշխարհի տարածքին այլ տեղեկատուական միջոցներ յայտարարած էին, թէ այս նոր հիւանդութիւնը եւս կրնայ քաղաքականապէս շահագործուիլ, այնպէս, ինչպէս եղած էր անթ-



Մանկիլայի օդակայանին մէջ...

րաքի պարագան, սակայն այս տեսութիւնը երբեք չբաժնուեցաւ աշխարհին կողմէ, որովհետեւ թոքատապի պարագան յատուկ կոհեր ունի եւ բժշկական յատուկ բացատրութիւններ կը տրուին անոր գծով, մինչդեռ նոյնը չէր անթրաքի պարագային:

● **ԱՐԱՐԱԿԱՆ Միացեալ Էմիրութիւններու** մէջ, որ Ասիոյ համար շրջանային կարեւոր կեդրոն մըն է, ՄԱՐՍի որեւէ պարագայ չէ արձանագրուած:

● **ՉՈՒԻՅԵՐԻՈՅ** մէջ հարաւարեւելեան Ասիայէն 2500 առեւտրականներու արգիլուած է մասնակցիլ գոհարեղէններու եւ ծամացոյցներու տօնավաճառի մը, որ Պալի մէջ տեղի կ'ունենայ, մահացու թոքատապին պատճառով:

● **ՍՇԽԱՐՀԻ** տարածքին օդանաւային թռիչքները մեծ տագնապ մը կը դիմագրաւեն՝ մինչ մահացու թոքատապին տարածումին գծով թափ ստացող խուճապը կը սպառնայ աւելի եւս ծանրակշիռ դարձնել Իրաքի մէջ պատերազմին անդամալուծող հետեւանքները:

ՅԵՉԵՆՈՅ ԸԱՐՑՈՎ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԷ ՌՈՒՍԻԱՆ

ՄԹՐԱԶՊՈՒՐԿ, 2 (ԱՅՓ). - Եւրոպական խորհուրդը Չորեքշաբթի օր զգուշացուցած է Ռուսիան, թէ կրնայ միջազգային ատեան մը ստեղծել՝ Չեչենիոյ մէջ պատերազմական ոճիւրները դատելու համար, եթէ անջատողական հանրապետութեան մէջ կացութիւնը չբարելաւորի:

Միջկառավարական Մարդկային Իրաւանց խորհրդարանական ժողովը ըսած է, թէ նման ատեան մը պէտք է հաստատուի, եթէ «ներկայ

մթնոլորտը անպատիժ շարունակուի»: Եւրոպական խորհուրդին խորհրդարանական ժողովը ռուսական Չեչենիոյ մէջ քաղաքայիններու իրաւունքները ռազմաբարելու եւ անհամատ կերպով ուժ գործածելու յանցանքներով: Մոսկուայի համաձայն, հակահաբեկչական պատերազմ մըն է, որ կը մղուի եւ յամենայն դեպս, մարդկային իրաւանց ենթադրեալ բռնատարածներուն շուրջ

Մոսկուայի համաձայն, հակահաբեկչական պատերազմ մըն է, որ կը մղուի եւ յամենայն դեպս, մարդկային իրաւանց ենթադրեալ բռնատարածներուն շուրջ

Մոսկուայի համաձայն, հակահաբեկչական պատերազմ մըն է, որ կը մղուի եւ յամենայն դեպս, մարդկային իրաւանց ենթադրեալ բռնատարածներուն շուրջ

Մոսկուայի համաձայն, հակահաբեկչական պատերազմ մըն է, որ կը մղուի եւ յամենայն դեպս, մարդկային իրաւանց ենթադրեալ բռնատարածներուն շուրջ

ԳԵՌՐԳ ՍԵԼԻՏԻՆԵՅԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գ. Մ. Գ. Մրցանակի դատակազմը կը յայտնէ, թէ բացուած է 2003ի համար նոր գործեր ներկայացնելու շրջանը:

Գ. Մ. Գ. Մրցանակը կ'ընդունի գրական թէ ուսումնասիրական որեւէ նոր, անտիպ, կամ գիրքի ձեւին տակ ցարդ լոյս չտեսած գործեր առի գնահատում եւ հրատարակութիւն:

Գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտական, բանասիրական եւ հայ մշակոյթի այլ կառուցներուն վերաբերող գործերը, հայերէն կամ ստար լեզուներով գրուած, պէտք է դատակազմին հասած ըլլան ամենաուշը մինչեւ 31 Մայիս 2003:

Առաքուած գործերը պէտք է ըլլան մեքենագրուած եւ երեք օրինակով: Դատակազմին կողմէ գնահատուած գործերը կ'արժանանան հրատարակութեան:

Վեհափառ հայրապետին նախագահութեամբ դատակազմին մաս կը կազմեն՝ Արտաւազ արք. Թրթռեան, Չարեհ արք. Ազնաւորեան, տիար Գեորգ Գանտահարեան (ատենապետ), տիար Պեպօ Սիմոնեան (ատենադպիր), տոքթ. Արմենակ Եղիայեան, տիար Պողոս Սնայեան եւ տիար Ժիրայր Դանիէլեան:

Դատակազմին հասցեն.-
Armenian Catholicosate of Cilicia
P. O. Box 70317
Antelias - Lebanon
E - Mail: cathcil@cathcil.org
Fax: +961 - 4 - 419 724

Դիւան
Գ. Մ. Գ. Մ.ի Դատակազմ

ԾԱՆՕԹ.- Դատակազմին ղրկուած գործերը հեղինակին չեն վերադարձուիր:

ԱՄԵՐԻԿԱՅԻՔ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ԵՐԷԿ...

Ծարուակուած Ա. Էջէն

կան կին պիտուր մը պատահած են: Ան իրաքեան ուժերուն կողմէ գերի բռնուած էր: Ըստ սպաներուն, գտնուած են նաեւ 11 դիակներ, որոնց ինքնութիւնը սակայն չէ յստակացած:

ՔԻՐՏ ԸՄԲՈՍՏԵՐ ԴԵՊԻ ՍՈՒՍՈՒԼ ԿՈՒՂՂՈՒՆ

Միւս կողմէ, քրտական ապահովութեան աղբիւրներ եւ պիտուրական հրամանատարներ յայտնած են, թէ քիւրտ ըմբոսներ երկու ճամբաներով դէպի Մուսուլ յառաջացած են երեկ, մինչ հիւսիսային շրջանին մէջ իրաքեան ուժեր Երեքշաբթի գիշեր նահանջ արձանագրած են:



Քիւրտ զինուորացիներ կը տեղափոխուին

Աղբիւրները խոստովանած են, թէ բախում տեղի չէ ունեցած, սակայն իրաքեան նահանջը «պարտութիւն մըն է»: Երկուշաբթի օր իրաքեան ուժեր Տահուրի շրջանէն քաշուած էին: Սատուամ Հիւսէյնը տապալելու համար նորագոյն այդ գործողութիւնները տեղի կ'ունենային մինչ իրաքեան ուժերը Տահուրի շրջանէն քաշուած էին:

մէջ կ'ապրին, մինչ եւրոպական մամուլը մեծ ցաւ յայտնած է քաղաքային կոհերու մեծ թիւին համար, ըսելով, թէ անոնք օգտակար են միմիայն Սատուամ Հիւսէյնի:

ԻՐԱԶՅԻԸ ԵՒ Ո՛Յ ԹԵ Մ. ՆԱՇԱՆԳՆԵՐ ՊԵՏԷ Ե ԿԱՌԱՎԱՐԵՆ ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ԻՐԱԸԸ

Մինչ մտահոգութիւնները թափ կը ստանան, թէ Ռուսիայի կողմէ կը ծրագրէ ամերիկեան վարչապարզ մը հաստատել յետպատերազմեան Պաղտատի մէջ, Բրիտանիոյ վարչապետ Թոնի Բլեր երեկ շեշտած է, որ Իրաք պէտք է իրաքցիներու կողմէ կառավարուի անմիջապէս, որ պատերազմը ւարտի:

նիոյ վճռակամութիւնը՝ տեսնելու, թէ Իրաքի մէջ առժամեայ որեւէ վարչակարգ պէտք է ՄԱԿի փորակցութիւնը վայելէ:

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուելը երեկ Յունաստանի մէջ եւրոպացի պաշտօնատարներու յայտնած է, թէ եւրոպական երկիրներ կրնան գործակցիլ Մ. Նահանգներու հետ՝ ներկայ պատերազմէն ետք Իրաքի վերակառուցման օժանդակելու համար: ● ՌՈՒՍԻԱ ԵՐԵԿ յայտնած է, թէ Մոսկուայի մէջ Մ. Նահանգներու դեսպանին բողոքները կայացուցած է Պաղ-

տատի մէջ Ռուսիոյ դեսպանատան մօտ ռումբեր իյնալէ ետք, ըսելով, թէ հոն գտնուող դիւանագետներուն կեանքերը վտանգած են:

Միւս կողմէ, ըստ «Նեպալիսիմայա Կապեթա» թերթին, Ռուսիա հաւանաբար ուղի մասեր պիտի ղրկէ Օնցի շրջանին մօտակայ Արաքսական Ծով:

● ԻՍՐԱԵԼԻ արտաքին գործոց նախկին նախարար Եիմն Փերես երեկ յայտնած է, թէ Իրաքի պատերազմը կրնայ արաքական իսլամական անոր Օնցի շրջանին մօտակայ Արաքսական Ծով:

● ԻՍՐԱԵԼԻ արտաքին գործոց նախկին նախարար Եիմն Փերես երեկ յայտնած է, թէ Իրաքի պատերազմը կրնայ արաքական իսլամական անոր Օնցի շրջանին մօտակայ Արաքսական Ծով:

● ՅՐԱՆՍՍԻ կառավարութիւնը հետզհետէ աւելի մտահոգ է, թէ Իրաքի մէջ պատերազմին իսլամական անոր Օնցի շրջանին մօտակայ Արաքսական Ծով:

● ՅՐԱՆՍՍԻ կառավարութիւնը հետզհետէ աւելի մտահոգ է, թէ Իրաքի մէջ պատերազմին իսլամական անոր Օնցի շրջանին մօտակայ Արաքսական Ծով:

● ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ 2003ի համար նոր գործեր ներկայացնելու շրջանը: